յառաջնորդն և համայն իշխանօք. մեզ ետ 6 մանէթ աջահամբոյր. մնացաք մինչեւ ցուրբաթ. կամեցաք որ փոստով գալ. հրամանագրին 24 մանէթ պահանջեց, չունէինք կարօղութիւն տալու. միսներս բերանս առինք ձիով գալ. որպէս եկինք ուրբաթ տուրն որ պարտ էինք շամախու դուս գալ, Գէորգ աղա Օքչայովն հրավիրեց չայի և զակօսկի, վայելեցինք Աստուած շէն պահէ. երեք մանէթ աջհամբոյր ետ. յոլով զուրկել գօշ և շահմալի ճանապարհի պաշար դրեց. Շամախու ելանք եկինք Սաղիան, միւս օրն Սաղիանցիք մեզ 5 ձի տվին ձրի որ մեր ծանրութիւն վերցընեն բերեն մինչեւ Գասպար բէկի գիւղն[1]) և անտի գիւղագիւղ եկինք Գանճա յառաջնորդարանն անդ մնացինք. 8. օր. շէն կէնա. յաջորդ Յարութիւն վարդապետն և իշխանքն մեզ լաւ մարդասիրութիւն ցոյց տվին։

. . . Վերջապէս յուլիսի 10ին հասանք սուրբ Շողակաթի վանքն, ուր գտի ծերունի Մարկոս վարդապետն յառաջնորդ, և Աբրահամ վարդապետն միաբան . . .

Հոկտեմբերի 5ին Նիկօլա Պավլովիչն Կայսրն եկն Սուրբ Աթոռս սհաթն 5ին. միաբան, Կաթուղիկոսն եկեղեցական զարդուք ընդ յառաջ ելին բազարի դուռն, Տրթադայ դռնովն մացրին վանքըն. ալ չուխայից փիանդազ էին ձգել զանգակատնիցն մինչեւ ցիչման տեղն։ Եկեղեցական որքան զարդ կայր թէ թաք թէ սաղավարդ, բուռվառ, խաչ և այլ անօթք ներկայացրին, որ տեսանէ թագաւորն, գնաց սրբոց մասունքներն համբուրեց. յանվանէ ետ հազար ոսկի պաճախլու մասանցն. մէկ Վլադիմի խաչ Կաթուղիկոսին. դուրս եկաւ գնաց տպարանն և անտի վարժարանն. միաբանից խցերի յառաջեվն գնաց ներսն եւս տեսաւ ոտաց վերայ, չնստեց ուրեք, ապա տրթադի դռնովն ելաւ. կէս սհաթ քաշեց մտնելն և ելնելն. գնաց Երեւան. լսեցինք թէ շատ արզա տվօղք եղեն. միւս օրն գնացի ներսն շնորհաւորեցի Կաթուղիկոսի առաջ պարգեւն, երկու թաս չայ խմեցի, ելայ դուրս։

« . . . Թագաւորը զկնի դուս գնալուն աթոռէս՝ ձեռամբ Ռօզինին. 1000 պաճախլու էր ուղարկել միաբանից ընծայ. նո-

---

[1]) Գասպար բէկի գիւղն է Աւանաչէն։